

ՏԱԿՈՒՇԻ ԱՆԱՍՆԱԳԱՀՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՐԳԱՑԱՄ ՄԻՋՆԱԴԱՐՈՒՄ

2. Ս. ԵՍԱՅԱՆ

Հին և միջնադարյան անասնապահական մշակույթի ուսումնասիրության համար գրավոր աղբյուրներից բացի հսկայական նշանակություն ունի ոսկրաբանական նյութը, որը զանգվածաբար դուրս է գալիս բոլոր պեղվող հուշարձաններից: Հին Հայաստանին վերաբերող հնագիտության մեջ այս մշակույթը զգալիորեն ուսումնասիրված է բազմաթիվ հետազոտողների կողմից: Ներկայումս հսկայական գրականություն է կուտակվել այս խնդրի վերաբերյալ¹:

Ինչ վերաբերվում է միջնադարյան անասնապահության մշակույթի ուսումնասիրությանը, ապա դրա վերաբերյալ ասպարեզում միայն Ս. Կ. Գալի փոքրիկ հաղորդումն է Գվինից հայտնաբերված ոսկորների վերաբերյալ²:

Միայն վերջերս լույս տեսան քրոշ աշխատանքներ, որոնց թվին են պատկանում մեր երկու ուսումնասիրությունը³ և Ծ. Ասատրյանի թեկնածուական թեզի մի գլուխը՝ նվիրված Ջաֆարի բերդի վաղ միջնադարյան ոսկրաբանական նյութի ուսումնասիրությանը, որը, ցավոք, չի հրատարակված, և հայտնի է միայն սեղմագրի համառոտ շարդարանքով⁴:

Իշկան-Տավուշի և Երան հարող շրջանների միջնադարյան անասնապահության և տնտեսական կենցաղի մասին որոշակի տվյալներ կան Մխիթար Գոշի⁵ և Կիրակոս Գանձակեցու՝ երկրում: Այս տվյալներից հետևում է, որ ուսումնասիրվող շրջանում և ամբողջ «ի կողման է Արևելից» երկրներում կիրառվել է զարգացած անասնապահություն՝ իր տնտեսական բազմազանությամբ և կենդանիների պահման զանազան տարրերակներով, երբ լայնորեն օգտագործվում էին սեզոնային (ամառային և ձմեռային) արոտավայրերը:

1986—1991 թթ. մեր կողմից Տավուշի շրջանում կատարված պեղումների ընթացքում հայտնաբերվել է բավական հետաքրքիր հնագիտական նյութ, որում զգալի թիվ են կազմում ընտանի և վայրի կենդանիների բազմազան ոսկորներ, որոնց ուսումնասիրությունը

¹ Տե՛ս Բ. В. Пиатровский, История и культура Урарту, Ереван, 1944, նույնի, Развитие скотоводства в древнейшем Закавказье, «Советская археология», вып. XXIII, 1956, նույնի, Ванское царство, Москва, 1959, Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, С. К. Даль, Череп примитивного домашнего быка эпохи ранней бронзы в Джарджарисе, «Труды гос. музея истории Армении», вып. V, Ереван, 1959, նույնի, Лошадь времен Урарту из раскопки Кармир-блур, «Изв. АН Арм. ССР», (естест. науки), 1947, С. К. Межлумян, Подсезаува эпохи энеолита, бронзы и железа на территории Армении, Ереван, 1972, А. А. Мартиросян, Город Тейше-башни, Ереван, 1961, նույնի, Аргистяхиния, Ереван, 1974, Ս. Ա. Եսայան, Զին արտադրության և զինվորական գործունեության, «ՀՍՄՀ ԳԱ Տեղեկագիր», 1962, № 4, նույնի, Оружие и воинское дело древней Армении, Ереван, 1976, նույնի, Կարևորագույն գործառնականությունը հին Հայաստանում, Երևան, 1994:

² Տե՛ս Ս. К. Даль, Птицы из раскопок Двина (VI—XIII вв.), «Труды гос. исторического музея Армении», вып. V, Ереван, 1952.

³ Տե՛ս Գ. С. Есаян, Скотоводство средневековой Армении по материалам бассейна реки Агстев, «Вестник Ереванского университета», 1988, № 1, стр. 121—125, նույնի, Материальная культура бассейна реки Агстев в развитии средневековья, Ереван, 1992, глава V.

⁴ Տե՛ս Ե. А. Асатрян, Ранне-средневековые крепости поселения Армении (по материалам Арагадотна), Автореферат кандидатской диссертации, Ереван, 1989.

⁵ Մխիթար Գոշ, Դատաստանագիրք Հայոց, Վաղարշապատ, 1880, էջ 315, 327, 344, 365, 366, 423, 433:

⁶ Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, Երևան, 1961, էջ 243, 264, 271, 273:

զգալիորեն կլրացնի մեր պատկերացումները միջնադարյան Հայաստանի անասնապահության վերաբերյալ⁷:

Ստորև քննարկվող ոսկրաբանական նյութը հայտնաբերվել է Տավուշ և Այգեծոր գյուղի մոտ գտնվող Աղջկա-բերդ ամրոցների տարբեր տեղամասերի պեղումներից, ինչը հնարավորություն է ընձեռնել լայնորեն բացահայտել տնտեսության ձևերը և կառուցվածքը:

Աղյուսակ 1-ում արտացոլվել է կենդանիների տարածումն ըստ տեսակների՝ նշելով զրտ-նելու վայրը:

Աղյուսակ 1

Հուշարձանի անվանումը	Կենդանիների տեսակներ	Ոսկորների քանակը	Առանձնյակ-ների քանակը
Տավուշ ամրոցի միջնաբերդ	ցուլ	528	150
	մ. Կ. ա.*	455	50
	խոզ	63	2 ¹⁾
	ծի	1	1
	եղջերու	5	5
	այծյամ	2	2
Ստորին բերդ 2-րդ տեղամաս	խ. Կ. ա.**	60	10
	մ. Կ. ա.	20	8
	խոզ	12	2
	ծի	4	2
	կրիա	1	1
	թռչուններ	7	—
Ստորին բերդ 3-րդ տեղամաս	կրծող	1	—
	խ. Կ. ա.	62	10
	մ. Կ. ա.	55	13
	խոզ	18	10
	ծի	3	2
	թռչուններ (1 հավ)	15	—
Այգեծոր գյուղի Աղջկա բերդ ամրոցի միջնաբերդ	կրծող	1	—
	խ. Կ. ա.	8	1
	մ. Կ. ա.	7	1
	խոզ	4	1
	թռչուններ	10	—
	Ստորին բերդ	խ. Կ. ա.	8
	մ. Կ. ա.	4	1
	խոզ	1	1

Ռնչպես տեսնում ենք բերված աղյուսակից, կենդանիների ոսկորների հարաբերության և առանձնյակների քանակը բոլոր պեղավայրերում համարյա միևնույնն է, ինչը հնարավորություն է տալիս որոշակի եզրակացության հանգել ուսումնասիրվող շրջանի բնակչության տրեստեսության ձևերի մասին: Սակայն անհրաժեշտ է հաշվի առնել, որ ոսկորների քանակը որոշակի դեր չի կարող խաղալ, քանի որ դրանք սննդի մնացորդներ են և դրանց պահպանվածության աստիճանը կարող է տարբեր լինել: Այդ տեսակետից ավելի որոշակի են առանձնյակների քանակի տվյալները, որոնք տրված են 2-րդ աղյուսակում:

⁷ Ոսկրաբանական նյութի բնորոշումը կատարել է կենսաբանական գիտությունների թեկնածու, հեղարան Ն. Ս. Մանասարյանը, որին, օգտվելով առիթից, մեր շնորհակալությունն ենք հայտնում:

* Մանր եղջերավոր անասուն:

** Խոշոր եղջերավոր անասուն:

Հուշարձանի անվանումը	խ. Բ. Կ.	մ. Բ. Կ.	խոզ	ձի	եղջերու	այծյամ	կրիա
Տավուշ ամրոց	170	71	32	5	5	2	1
Այգեձորի Ազգիա-բերդ ամրոց	2	2	2	—	—	—	—
Ընդամենը	172	73	34	5	5	2	1

Ինչպես տեսնում ենք բերված աղյուսակից, ընտանի կենդանիների առանձնյակները ներկայացված են հետևյալ կազմով՝ խոշոր եղջերավոր անասուններ—172 (որից ցուլ՝ 150, 22-ը ստույգ չի որոշված), մանր եղջերավոր անասուններ—73 (զրանց մեջ կան առանձին բնորոշված երիտասարդ խոյ, ոչխար և այծ), խոզ—34, ձի—5: Գտնվել են նաև թռչունների բազմաթիվ ոսկորներ, որոնցից որոշվել է միայն մեկ հավ: Բացի ընտանի կենդանիներից, գտնվել են նաև վայրի կենդանիների ոսկորներ՝ եղջերու—5, այծյամ—2, կրիա—1:

Այսպիսով, բերված ոսկրաբանական նյութում, ինչպես քանակական, այնպես էլ որակական տեսակետից գերիշխում են խոշոր եղջերավոր անասունները (մոտ 60%): Այս հանգամանքը հիմք է տալիս ելրակացնելու, որ նշված շրջանի բնակչությունը զբաղվել է գերազանցապես երկրագործությամբ, որը պահանջում էր քարշող ուժի լայն օգտագործում: Բերված տվյալները միևնույն ժամանակ ծանրակշիռ ապացույց են այն բանի, որ շրջանի տնտեսական կյանքում անասնապահությունը զգալի դեր է խաղացել:

Նույն պատկերն է հարևան Իջևանի շրջանում, որի բազմաթիվ հուշարձաններից հայտնաբերված ոսկրային նյութի մեջ գերակշռողը խոշոր եղջերավոր անասունների ոսկորներն են (37-ը 88 առանձնյակներից—ավելի քան 42%)⁸, նույնը կարելի է ասել Զաքարի բերդի վաղ միջնադարյան նյութերի մասին, ուր խոշոր եղջերավոր անասունների ոսկորների թիվը հասնում է 49,9%⁹: Մանր եղջերավոր անասունները նույնպես զգալի զլխաքանակ ունեն և զբաղեցնում են երկրորդ տեղը (մոտ 25%): Այս տվյալները վկայում են, որ քննարկվող շրջանում ամենուրեք զբաղված էին խոշոր և մանր եղջերավոր անասնապահությամբ, ինչը, որպես կանոն, պահանջում էր ինչպես մերձակա, այնպես էլ հեռավոր արոտավայրերի առավելազույն օգտագործում, որը հավանաբար պետք է բնորոշեր հեռագնա անասնապահության հարազործությունը: Այս եզրակացությունը միանգամայն օրինալի է, քանի որ հետազոտվող շրջանում համանան մշակութային երևույթները վավերագրվել են ինչպես ավելի վաղ բրոնզի և երկաթի դարի նյութերով¹⁰, այնպես էլ ավելի ուշ ժամանակաշրջանի ազգագրական տվյալներով¹¹:

Նեոագնա անասնապահությունը Հայաստանում սկիզբ է առել դեռ մ. թ. ա. IV հազ. վերջերից և լայնորեն օգտագործվում է մինչև մեր օրերը: Նեոավոր լեռնային ընդարձակ արոտավայրերն օգտագործվում են ամռանը: Սա բնորոշ է ինչպես Իջևան—Տավուշին, այնպես էլ Սյունիքին, Արցախին, Լոռիին և այլն:

Ինչպես ցույց են տալիս ազգագրական նյութերը, բոլոր վերը նշված շրջաններում հողօգտագործման ամենատարածված ձևը երկրագործության և անասնապահության զուգակցումն էր, ընդ որում՝ հողային պայմանները հնարավորություն չէին ընձևում երկրագործությամբ զբաղվելու, առանց մեծաքանակ բանող անասունների օգտագործման, ինչը հաստատվում է նաև մեր գտածոներով:

Մանր պատկեր դիտվում է նաև Տավուշի մ. թ. ա. 3—1-ին հազարամյակներով Թվաղորդ Արծվաբերդ, Խորշին-հողեր, Ղմշկոճ, Տանձուտ հուշարձանների նյութերով, ուր խոշոր եղջերավոր անասունները նույնպես գերազանցում են մանրերին¹²:

⁸ Տե՛ս Գ. Ս. Եսայն, Скотоводство средневековой Армении... էջ 123:

⁹ Տե՛ս Ե. Ա. Բատրյան, Ըզվ. աշխ., էջ 16, 17:

¹⁰ Տե՛ս Ս. Ա. Եսայն, Древняя культура племен Северо-Восточной Армении, էջ 170—173:

¹¹ Տե՛ս Ե. Ի. Մկրտչյան, Формы скотоводства Восточной Армении, в кн. Армянская этнография и фольклор, вып. 6, Ереван, 1974, էջ 23—45:

¹² Տե՛ս Ս. Ա. Եսայն, Древняя культура племен Северо-Восточной Армении, էջ 171—172:

Նստակյաց տնտեսության մասին են վկայում նաև գտնված խոզերի ոսկորները (մոտ 12%), որոնց անհնարին է բուծել քոչվորական կամ կիսաքոչվորական տնտեսականերում: Այս տվյալների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզաբանելու զարգացած միջնադարում տնտեսության երկրագործական-անասնապահական գերակշռող եղանակը:

Իշխանի շրջանում, ուր խոշոր եղջերավոր անասունների առանձնյակների թիվը հասնում է 37 (42%), մանրինը՝ 28 (մոտ 32%) և խոզերինը 18 (20%)¹³: Փոքր-ինչ տարբերվում են վաղ միջնադարյան Զաքարի-բերդ ամրոցի տվյալները, ուր խոշոր եղջերավոր անասունների ոսկորները կազմում են 49%, մանրինը՝ 31%, իսկ խոզերինը՝ ընդամենը 5%¹⁴:

Այս տվյալները, որոնցից մեկը վերաբերում է Տավուշին հարևան, իսկ մյուսը՝ հեռավոր շրջանին, հնարավորություն են տալիս խոսելու Հայաստանում տարածված նստակյաց երկրագործական-անասնապահական համալիր տնտեսության մասին, ուր լայնորեն օգտագործվել է հեռագնացության կարգը, որը բնորոշ էր Կովկասի և Առաջավոր Ասիայի համար, ավելի առաջադեմ, քան քոչվորային կամ կիսաքոչվորային անասնապահությունը, և խթանել է անասնապահության հետագա զարգացմանը:

Ամառային արոտավայրեր էին քշվում ոչ միայն մանր եղջերավոր անասունները, այլև խոշորների զգալի մասը: Բնակավայրերում թողնվում էր միայն երկրագործությանը զբաղվող բնակչությանը կաթնամթերքով ապահովելու համար անհրաժեշտ կովերի քանակ, ինչ կիրառվում է և այսօր: Ավելին՝ Տյուրխ-արևելյան Հայաստանում, ուր կան հաճախ անտառներ (իսկ առանձին հատվածներում՝ մրգատու ծառեր), ամռան-աշնանային սեզոնում այստեղ էին քշվում նաև խոզերը: Խոզերի ազատ արածելու եղանակի այս ձևը լայնորեն տարածված էր նշված շրջաններում XIX դարում, մասամբ օգտագործվում է նաև մեր օրերում:

Աշնանը ամառային արոտավայրերից վերադարձած անասունները մաուրային եղանակով պահվում էին հատուկ ձմեռանոցներում, իսկ որոշ տեղերում կեր հայթայթելու համար դուրս էին բերվում անտառամերձ հատվածներ:

Հետաքրքիր են ձիերի ոսկրային մնացորդները, որոնք, ըստ առանձնյակների, զբաղեցնում էին 4-րդ տեղը (մոտ 1,8%): Մոտավորապես նույն պատկերն է հարևան Իշխանի շրջանում: Չնայած գլխաքանակը երկու շրջաններում ճուշն է, տարբեր անասունների հարաբերության տարբերության շնորհիվ Իշխանում ձիերի քանակը կազմում է 5,5%¹⁵: Սակայն այս տվյալները շեն բացահայտում ձիերի իրական քանակը երկրում, քանի որ ձին հսկայական դեր է խաղացել հծծելազորում:

Պեղումներից գտնված ցուլերի, ոչխարների, խոյների, այծերի, խոզերի և ձիերի ոսկրային նյութերը սննդի մնացորդներ են: Նշված առաջին շորս կենդանիների վերաբերյալ ոչ մի կասկած չի կարող: Ինչ վերաբերում է ձիերին, մեր կարծիքով, սրանք նույնպես օգտագործվել են իրրև մատու կենդանիներ, և դրանց ոսկորները նույնպես սննդի մնացորդներ են: Այս ենթադրությունը հաստատվում է այն բանով, որ Իշխանի շրջանի Մակահղցի բնակատեղիում ձիու ոսկորները գտնվել են աղբահորում այլ կենդանիների ոսկորների հետ¹⁶: Միջնադարյան Հայաստանում ձին իրրև մատու կենդանի օգտագործելու փաստը հաստատվում է նաև նրանով, որ այն հնում նույնպես օգտագործվել է իրրև սնունդ: Այդ մասին են վկայում Կարմիր-բլուրի նախաուրարական բնակավայրի¹⁷ և Տյուրխ-արևելյան Հայաստանի մի շարք հուշարձանների նյութերը¹⁸, ինչպես նաև՝ այն հանգամանքը, որ Մխիթար Գռչի դատաստանագրքում կենդանիները բաժանվում են մաքուր (իրրև սնունդ օգտագործող) և պիղծ (բարձկան) կենդանիներին¹⁹: Մեր կարծիքով այս հողվածների ներառումը դատաստանագրքում հենց վկայում է, որ բնակչության որոշ մասը դեռ օգտագործում էր ձիու միսը:

Հետաքրքիր է նաև Տավուշ ամրոցում կրիայի զբահի հայտնաբերումը: Կրիայի ոսկորները գտնվել են նաև Իշխանի շրջանի Մակահղցի բնակատեղիում²⁰: Ներկայումս մեծ թվով կրիաներ կան Իշխան—Տավուշում, սակայն այն չի օգտագործվում սննդի մեջ: Կրիան կարող էր օգտագործվել բուժիչ նպատակով: Այդպիսի օրինակ կարող է ծառայել Արգիշտիի թիֆլիսի քրժիխ՝ կացարանում այլ կենդանիների ոսկորների հետ միասին կրիայի ոսկորների գյուտը: 2. Մարտիրոսյանը և Ս. Մեծումյանը, ելնելով ընդհանուր ազգագրական տվյալներից, զբո-

¹³ Տե՛ս Գ. Ս. Եսայն, Գշվ. աշխ., էջ 128—124:

¹⁴ Տե՛ս Ե. Ա. Բասրյան, Գշվ. աշխ., էջ 16—17:

¹⁵ Տե՛ս Գ. Ս. Եսայն, Գշվ. աշխ., էջ 123, աղ. 2:

¹⁶ Տե՛ս Գ. Ս. Եսայն, Գշվ. աշխ., էջ 124:

¹⁷ Տե՛ս Ա. Ա. Մարտիրոսյան, Город Тейшебаши, էջ 68:

¹⁸ Տե՛ս Ս. Ա. Եսայն, Древняя культура племен Северо-Восточной Армении, էջ 170:

¹⁹ Տե՛ս Մխիթար Գռչ, Նշվ. աշխ., էջ 348, 423 և այլն:

²⁰ Տե՛ս Գ. Ս. Եսայն, Գշվ. աշխ., էջ 124:

նում են, որ կրիան օգտագործվել է բժշկական նպատակներով²¹: Հատկապես արժեքավոր են կրիայի ձվերը: Հանրահայտ միջնադարյան հայ բժիշկ Ամիրդովլաթ Ամասիացին նշում է, որ «Կրիայի արյունը գինու հետ օգտագործելիս օգնում է խոցի և ականջի ցավի դեպքում, ձվերը դադարեցնում են հազը, իսկ լեղին՝ արնահոսությունը»²²: Հնարավոր է, որ շարունակելով ժողովրդական բժշկության ավանդությունները՝ Տավուշ ամրոցում և Մակահղցիում կրիաներն օգտագործվել են իրեն դեղամիջոց տարրեր հիվանդություններ բուժելու նպատակով:

Ինչ վերաբերվում է Տավուշ ամրոցում գտնված վայրի կենդանիների ոսկորներին (եղջերու՝ 5 առանձնյակ և այծյամ՝ 2 առանձնյակ), ապա դրանք որսորդության արդյունք են և օգտագործվել են սննդի մեջ: Նման կենդանիների ոսկորներ հայտնաբերվել են նաև Իջևանի շրջանի Սարի-Բաշ, Մակահղցի, Առաքելոց վանքի բնակատեղիներից, ուր գտնվել են շորս եզերուրի և մեկ այծյամի ոսկորներ²³: Զաքարի բերդ ամրոցի ոսկրաբանական նյութերում վայրի կենդանիների ոսկորները կազմում են 5%: Գտնվել են վայրի այծի, եղևիկի, եղջերուի և արջի ոսկորներ²⁴:

Նշված տվյալները վկայում են, որ այս շրջաններում որսորդությունը մեծ տեղ է գրավել բնակչության կենցաղում:

Ամփոփելով վերը նշված ոսկրաբանական նյութերի վերլուծությունը և զուգահեռելով այն համաժամանակյա հուշարձանների նյութերի և XIX դարի և XX դարի առաջին կեսի ազգագրական տվյալների հետ՝ կարելի է անել մի շարք եղրակացություններ, որոնց հիմքում ընկած է հնագիտական-ազգագրական քննարկման մեթոդը:

Ոսկրային նյութերի մնացորդների մեջ խոշոր ու մանր եղջերավոր անասունների և խոզերի ոսկորների գերակշռումը վկայում է ինչպես նստակյաց սնտեսության կենցաղի, այնպես էլ տնտեսավարության տարբեր ձևերի համակեցության մասին: Այդ համակեցությունն արտահայտվում է զարգացած երկրագործական և նստակյաց-հեռագնա անասնապահության զուգակցումով: Այս երևույթը բնորոշ էր ամրոցը Հայաստանի համար, հատկապես հետարարական շրջանում, երբ երկրագործությունը և անասնապահությունը վերականգնվելուց հետո սկսեցին արագ դարգանալ: Ավելանում էր ցանքսերի տարածքը և կենդանիների զխաբանակը: Կենդանիների զխաբանակի աճի հետևանքով վերականգնվում է հողի պարարտացումը գոմազրով, առաջ են գալիս նոր՝ ավելի կատարելագործված գյուղատնտեսական գործիքներ:

Հետագա պեղումները հնարավորություն կընձեռեն նոր ոսկրաբանական նյութերի և երկրագործական գործիքների հիման վրա հիմնավորել մեր եզրակացությունները, բացահայտել ինչպես ավելի փոքր շրջանները տնտեսաձևերի համակեցությունները, այնպես էլ անասնապահության տեսականու կառուցվածքը:

Г. С. ЕСАЯН— Скотоводство Тавуша в развитие средневековье. Автор, анализируя остеологические материалы своих раскопок в крепостях Тавуш и Ахчка-Берд близ села Айгедзор Тавушского района, впервые пытается восстановить формы земледельческого и скотоводческого хозяйства рассматриваемого региона. Анализ и качественное соотношение костей крупного и мелкого рогатого скота и костей диких животных показывает, что в рассматриваемом регионе как и повсеместно в Армении доминировала форма развитого земледелия в сочетании с оседло-отгонным скотоводством и частично охотой, не имеющей однако хозяйственного значения.

²¹ Տ՛՛՛ս Ա. Ա. Մարտիրոսյան, Ս. Կ. Մեջլումյան, Некоторые археологические данные об урартской медицине, «Պատմա-քննարկական հանդես», 1972, № 1:

²² Ամիրդովլաթ Ամասիացի, Անգիտաց անպետ, Վիեննա, 1926, էջ 538, 588:

²³ Տ՛՛՛ս Գ. Ս. Եսայան, նշվ. աշխ., էջ 128:

²⁴ Տ՛՛՛ս Ե. Ա. Կատրյան, նշվ. աշխ., էջ 17: